

ՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՀՀ-ՈՒՄ

ԱՎԵՏԻՍՅԱՆ Ն. Ռ.

Զարգացած երկրներում, ի տարբերություն զարգացողների, որպես կանոն, ընդհանուր եկամուտների կառուցվածքում ուղղակի հարկերի տեսակարար կշիռը բարձր է, իսկ անուղղակի հարկերինը՝ ցածր: Ճիշտ է, նման տարբերությունները պայմանավորված են նաև երկրների տնտեսական առանձնահատկությունները բնութագրող բազմաթիվ այլ գործոններով, սակայն գրեթե բոլոր զարգացող երկրների համար ակնհայտ է նմանօրինակ միտումը:

ՀՀ հարկային համակարգը ձևավորվել է 90-ական թվականներին, և սկզբնական շրջանում ընդհանուր եկամուտների կազմում ուղղակի հարկերն ունեին բավական բարձր տեսակարար կշիռ, ինչը տարիների ընթացքում էապես նվազել է: Դրան հակառակ, ընդհանուր եկամուտների մեջ տարեցտարի ավելանում է ապրանքների և ծառայությունների վրա դրված հարկերի տեսակարար կշիռը: Սա պայմանավորված է մի շարք գործոններով, մասնավորապես՝ տնտեսության կառուցվածքում ներմուծման մեծ տեսակարար կշիռով, անցումային և զարգացող շատ երկրներում ստվերային տնտեսության առկայությամբ, հարկային թույլ վարչարարությամբ, եկամուտների թերհայտարարագրմամբ և այլն:

Քննենք ուղղակի հարկերի վրա ազդող գործոնները և դրանց փոփոխության հիմնական միտումները, ինչպես նաև դրանց ազդեցությունը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա, հատկապես համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում: Ակնհայտ է, որ համաշխարհային տնտեսությունն այսօր ընկղմվել է ֆինանսատնտեսական խոր ճգնաժամի մեջ: Սրա առաջին ախտանշաններն ի հայտ եկան 2007 թ., և այն վերջնականապես դրսևորվեց 2008 թ.՝ ԱՄՆ-ի մի շարք ֆինանսական ընկերությունների սնանկացմամբ և միաձուլումներով: Սկսվելով ԱՄՆ-ի ֆինանսական համակարգի փլուզումից՝ այն շուտով վերածվեց ֆինանսական և տնտեսական գլոբալ ճգնաժամի՝ հանգեցնելով կարճաժամկետ ֆինանսական միջոցների լայնածավալ արտահոսքի, զարգացող երկրներում ներդրումային ծրագրերի կրճատմանը և հետաձգմանը, շուկայի մասնակիցների միջև վստահության կորստին, համաշխարհային ՀՆԱ աճի տեմպերի նվազմանը, աշխատատեղերի կրճատմանը և գործազրկության աճին ու համաշխարհային շուկաներում հումքի և որոշ ապրանքների գների նվազմանը:

Բնական է, որ այս ճգնաժամից անմասն չմնաց նաև Հայաստանը: Դրա առաջին նշանները ի հայտ եկան 2008 թ. կեսերից, իսկ առավել խորությամբ՝ այս տարվա սկզբից: Մասնավորապես, կրճատվել են հանրապետությունում մակրոտնտեսական պահանջարկի գերակշիռ մասը կազմող արտաքին մասնավոր տրանսֆերտները, էապես նվազել են արտաքին և ներքին մասնավոր ներդրումները, կրճատվել են արտադրության և արտահանման ծավալները՝ մասնավորապես հան-

քահումքային արդյունաբերության մեջ, շինարարության ոլորտում հետաձգվել կամ կրճատվել են որոշ ներդրումային ծրագրեր, աճել է գործազրկության մակարդակը ոչ միայն բուն Հայաստանում, այլև արտագնա աշխատանքի մեկնած անձանց շրջանում, կրճատվել է սպառման մակարդակը: Եվ իբրև հետևանք վերը նշված գործոնների՝ անկում են ապրել նաև պետական բյուջեի հարկային մուտքերը:

Այդ մասին են վկայում նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հրապարակած տվյալները, ըստ որոնց՝ այս կիսամյակում, նախորդ տարվա առաջին կիսամյակի հետ համեմատած, խոշոր հարկ վճարող որոշ տնտեսվարողների վճարած հարկերը շոշափելիորեն կրճատվել են: Դա առաջին հերթին վերաբերում է հանքարդյունաբերության ոլորտին: Այս տարվա առաջին կիսամյակի տվյալներով, խոշոր շահութահարկ վճարող «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ընկերությունը պետական բյուջե է մուծել ընդամենը 1 մլն դրամ շահութահարկ և եկամտահարկ, մինչդեռ 2008 թ. այս ընկերությունը պետական բյուջե է վճարել շուրջ 4.3 մլրդ դրամ ուղղակի հարկ: Զգալի նվազել են նաև «Մաքուր երկաթ» գործարանի հարկային պարտավորությունները: 2008 թ. առաջին կիսամյակի տվյալներով, այս գործարանը պետական բյուջե է մուծել 1.7 մլրդ դրամ ուղղակի հարկ, իսկ այս տարվա նույն ժամանակահատվածի դրությամբ՝ 100 մլն դրամ: Հարկային պարտավորությունների նման կտրուկ նվազումը հիմնականում պայմանավորված է համաշխարհային շուկաներում հումքային ապրանքների գների նվազմամբ, իսկ այս կազմակերպությունների արտադրած արտադրանքը մեծ մասամբ արտահանվում է: Մասնավորապես, համաշխարհային պահանջարկի նվազման հետ կապված՝ հումքային ապրանքների, այդ թվում՝ նաև մետաղների գների կտրուկ նվազումը հանգեցրել է մետաղների արտահանման կրճատմանը (մետաղների արտահանումը 2007 թ. տվյալներով, Հայաստանի Հանրապետության ընդհանուր արտահանման մեջ կազմում է մոտ 40%¹):

Ճգնաժամից առավել տուժած ոլորտներից է շինարարությունը, որի անկումը կազմել է շուրջ 56%: Սա չէր կարող չանդրադառնալ շինարարությամբ և շինանյութերի վաճառքով զբաղվող ընկերությունների հարկային պարտավորությունների վրա: Մասնավորապես, «Միկմետալ» ընկերությունը 2008 թ. առաջին կիսամյակում պետական բյուջե է վճարել 108.6 մլն դրամ ուղղակի հարկ, իսկ 2009 թ. նույն ժամանակահատվածում՝ ընդամենը 18 մլն դրամ: Այս ոլորտի մեկ այլ հարկատու՝ «Արարատցեմենտ» ընկերությունը 2008 թ. առաջին կիսամյակում 768 մլն դրամ վճարած ուղղակի հարկի գումարով, այս տարվա առաջին կիսամյակի տվյալներով, ընդհանրապես դուրս է մնացել խոշոր հարկատուների ցուցակից:

¹ 2008 թ. անբարենպաստ զարգացումներով պայմանավորված՝ ոչ թանկարժեք մետաղների տեսակարար կշիռն արտահանման մեջ նվազել է մինչև 32%:

Այդ ցուցակում և՛ անցած, և՛ այս տարվա առաջին կիսամյակների տվյալներով, երկրորդ տեղն է զբաղեցնում է հայ-ռուսական Հայռուսագաղթը ընկերությունը, որը չնայած այն բանին, որ 2008 թ. երկրորդ եռամսյակից սկսած՝ հանրապետությունում բարձրացրել է գազամատակարարման սակագները, սակայն նրա հարկային պարտավորությունները նվազել են գրեթե 2.5 անգամ, ընդ որում, միայն ուղղակի հարկերի գծով՝ 2 անգամ (2008 թ. բյուջե է փոխանցվել 937 մլն ուղղակի հարկ, իսկ 2009 թ.՝ 508 մլն): Սա պայմանավորված է գազի սպառման ծավալների կտրուկ նվազմամբ, որն ավելի շատ դրսևորվել է արդյունաբերության մեջ:

Փոփոխություններ են տեղի ունեցել նաև կապի ոլորտի հարկատուների հարկային պարտավորությունների կառուցվածքում: 2008 թ. առաջին կիսամյակի արդյունքներով, պետական բյուջե վճարած ուղղակի հարկերի գծով առաջատար է եղել «Ղ Տելեկոմ» կազմակերպությունը, որը բյուջե է վճարել շուրջ 5.7 մլրդ դրամ ուղղակի հարկ, իսկ այս կիսամյակի տվյալներով՝ ընդամենը 550 մլն դրամ և իր տեղը զիջել է «Արմենիա տելեֆոն քամպնի» ընկերությանը, որն այս կիսամյակում ուղղակի հարկերի գծով առաջին խոշոր հարկատուն է և պետական բյուջե է մուծել շուրջ 1.5 մլրդ շահութահարկ ու եկամտահարկ՝ չնայած անցած տարվա առաջին կիսամյակում ընկերությունը պետական բյուջե էր մուծել 2,4 մլրդ դրամ ուղղակի հարկ: Խոշոր հարկատուների ցուցակը գլխավորող «Ալեքս գրիգ» ընկերությունը, անցած տարվա առաջին կիսամյակի տվյալներով, զբաղեցնում էր յոթերորդ հորիզոնականը և բյուջե էր մուծել շուրջ 7մլն դրամ ուղղակի հարկ, իսկ այս տարվա առաջին կիսամյակում՝ 10.6 մլն դրամ:

Ընդհանուր առմամբ, այս տարվա առաջին կիսամյակի տվյալներով, շահութահարկի գծով բյուջեի մուտքերը նվազել են շուրջ 1.2 մլրդ դրամով: Անկումն ավելի մեծ է եղել ոչ պետական՝ մասնավոր հատվածի վճարած շահութահարկի պարագայում: Հակառակ դրան՝ շուրջ 33%-ով ավելացել են ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից վճարվող շահութահարկի գումարները:

Սակայն շահութահարկի գծով բյուջեի մուտքերի փոփոխության ամփոփ գնահատականը կարող ենք տալ միայն 2010 թվականից, քանի որ հարկատուները հաշվետու տարվա ընթացքում կատարում են շահութահարկի կանխավճարներ, որոնք հաշվարկվում են նախորդ տարվա՝ 2008 թ. փաստացի շահութահարկի հիման վրա, իսկ 2008 թ. տնտեսական անկումը դեռ այս մասշտաբներին չէր հասել:

Ի տարբերություն շահութահարկի՝ դրական տեղաշարժ է նկատվել պետական բյուջե մուծված եկամտահարկի գումարների առումով: Անցած տարվա առաջին կիսամյակի համեմատությամբ, այս տարվա առաջին կիսամյակում պետական բյուջե մուծված եկամտահարկի գումարներն աճել են շուրջ 3 մլրդ դրամով: Այս աճը հիմնականում տեղի է ունեցել ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտների մասով, որը պայմանավորված է պարզեցված հարկով ձեռնարկատիրական գործունեության դադարեցման

հետ: Միաժամանակ, պատկերը հետաքրքիր է ընդհանուր հարկային եկամուտների կառուցվածքում: Մասնավորապես, անցած տարվա համեմատ, հարկային եկամուտները նվազել են 17%-ով, սակայն միայն առաջին կիսամյակի արդյունքներով, հարկեր-ՀՆԱ հարաբերակցությունն աճել է 0.5%-ային կետով, երբ ծրագրավորվածը եղել է 0.3-0.4%-ային կետ: Սա վկայում է այն մասին, որ մեծացել է հարկային բեռը, քանի որ դրույքաչափերի փոփոխություն տեղի չի ունեցել, դեռ ավելին, բարենպաստ օրենսդրական դաշտ է ստեղծվել փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության համար:

Հաշվի առնելով այս ամենը՝ կարծում ենք՝ տնտեսական ճգնաժամը կարող է արդյունավետ լծակ դառնալ երկրի մրցակցային առավելությունները գնահատելու հարցում, մասնավորապես, խթանել ներքին արտադրությունը, բարելավել արտահանման կառուցվածքը, լուծել օր օրի ավելացող գործազրկության հիմնախնդիրը և մի շարք այլ խնդիրներ, ոչ թե ճգնաճամից դուրս գալու միակ ելքը տեսնել հսկայածավալ օտարերկրյա վարկերի և հարկահավաք մարմինների կողմից ամեն գնով հարկեր հավաքելու մեջ:

ПРЯМЫЕ НАЛОГИ И ЭКОНОМИЧЕСКИЙ КРИЗИС В РА

АВЕТИСЯН Н. Р.

Резюме

Экономический кризис, начавшийся в результате финансового кризиса, уже в середине 2007 г. стал глобальной проблемой, приведшей к спаду мировой экономики. Естественно, что кризис затронул и экономику Республики Армения. Первые признаки кризиса дали о себе знать еще в середине 2008 г. и более углубились в начале сего года.

Изучение факторов, влияющих на прямые налоги в условиях мирового экономического кризиса, явствует о том, что эти факторы отражаются также на доходах государственного бюджета.